ին հարաւային մասն դաշտային, որ է Աղսու, Կիրք, Գեօքչայ գիւղերիցն սկսած։ Ի հարկ է լեռնային կողմանց օդ ու ջուրը լաւ կը լինի, իսկ դաշտային կողմանցն՝ երկրային բերքն ու բարիքն։

Դաշտի գիւղերումն գտնւում են ամեն տեսակ ծառապրտուղներ, ինչպէս Արարատեան դաշտումն. նոյնպէս և երկրային բերք և բոյսք։ Միայն այս երկիրը տալիս է բաւական մետաքս (ապրիշում) և նաւթ, որ Արարատեան երկիրը չունի. բայց նաւթի փոխանակ ունի Արարատեան նահանգը լաւ աղահանքեր, զօր. Կողբայ, Կաղզվանայ, և Նախիջեւանայ, նոյնպէս ունի և ամեն տեսա մետաղաց հանքեր, զօր. ոսկի, արծաթ, պղինձ, երկաթ եւայլն։ Ջիրուանի լեռնագաւառի Հայ գիւղօրայքը հարուստ են այգիներով՝ որ անջուր են աճում, և պատուական գինի են տալի աշխատաւորաց, և անուանի են գինին Մատրասայ, Քարքանջ և Սաղիան գիւղօրէիցն, որ մինչեւ Ռուսաստանի տօնավաճառներն են տանում։ Այս լեռնագաւառի միջովն են անցնում Աղսու, Գիրդիման (Գարթման) և Գեօքչայ (Կոկիսոն) գետերն և գնում տարածւում են դաշտի գիւղօրայքը՝ մինչեւ Կուր գետը։

Այս Շիրուանի երկրի մէջ են Աղուանից հին հին քաղաքներն. Գարտայ՝ Կուր գետի աջակողմեան եզերքին, Գեշտասֆ, Կասպից ծովեզերքին Սալիանի մօտերին հիմնուած Գարսից Դարեհ թագաւորի հայր Վշտասպից՝ հռչակաւոր Գերսէպոլիս քաղաքի շինողից։ Ջիրուան՝ Աղսու գետի և գիւղի մօտերին, Ջիւանշիրապատ՝ Վանքաշէն և Ամրվան գիւղերի հանդէպ Գեօքչայ գետի եզերքումն՝ լեռների ստորոտի տափարակումն Ջիւանշիր իշխանի հիմնածն։

Կայ և Ճաքի կամ Նուխի քաղաքի մօտ Զօրզաթ անունով Հայի գիւղ, որ Նուխուց 18 վերստ հեռու հին քաղաքատեղի է, որոյ աւերակաց վրայ գիւղ 100 տուն Հայոց, ուր կայ և հին վանք, մի մատուռ և մի եկեղեցի և ընդարձակ գերեզմանատուն հին հին գրուածքով։

Զողա կամ Ճօրա՝ որոյ անունովն և մեծ դուռն է յիշւում, այն է Դարբանդ, այժմեան Ջուրան է կամ Թամիր Խան-Ջուրայ։